ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 07

Հայաստանի Հնարապետության Արագածոտնի մարզպետարանում **29.12.2012թ.** տեղի ունեցած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին՝

Ս.Սահակյան ՀՀ Արագածոտնի մարզպետ
Ա.Արսենյան ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Հ.Գևորգյան ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
Հ.Օհանյան ՀՀ ՏԿՆ ներկայացուցիչ
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ
ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներում 2012 թվականի սեփական եկամուտների հավաքագրման և նախորդ տարիներին գոյացած աշխատավարձների և սոցվճարների պարտքերի մարման գործընթացի մասին/ զեկ. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ /:

2. 2013 թվականի փետրվարին կայանալիք ՀՀ Նախագահի ընտրությունների կազմակերպական և պատշաճ անցկացման խնդիրների մասին /զեկ. ՏԻՄ վարչության պետ Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ/:

3. 2012 թվականին ՀՀ Արագածոտնի մարզում իրականացված ընդհանուր աշխատաքների մասին տարեկան ամփոփիչ տեղեկատվության տրամադրում /Մարզպետ՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ/:

Այլ հարցեր և հայտարարություններ:

Կից՝զեկուցողների զեկուցագրերը:

ՀՀ Արագածոտնի մարզպետ՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

Դեկտեմբերի 29-ին կայացավ Արագածոտնի մարզխորհրդի վերջին՝ ութերորդ նիստը, որտեղ ամփոփվեցին անցնող տարում մարզում իրականացրած ծրագրերն ու առաջիկա խնդիրները: Մարզպետ Սարգիս Սահակյանը նշեց, որ տարին, ընդհանուր առմամբ, հաջող էր մարզի համար: Պետական բյուջեի, միջազգային տարբեր կազմակերպությունների, հիմնադրամների, անհատ բարերարների եւ այլ աղբյուրների ֆինանսավորմամբ տնտեսության մեջ, քաղաքաշինության, ճանապարհաշինության, առողջապահության, կրթության, մշակույթի եւ այլ ոլորտներում իրականացվել շուրջ 43 միլիարդ դրամի կենսական նշանակություն ունեցող ծրագրեր:

Քննարկվեց մարզի համայնքներում 2012 թվականի սեփական եկամուտների հավաքագրման եւ նախորդ տարիներին գոյացած աշխատավարձների և սոցվճարների պարտքերի մարման գործընթացի մասին հարցը: Նշվեց, որ դեկտեմբերի 27-ի դրությամբ համայնքների սեփական եկամուտների հավաքագրումը կազմել է 90 %: Մինչեւ տարեվերջ այս ցուցանիշի կավելանա:

Նիստի կարևոր հարցերից մեկը 2013 թվականի փետրվարին կայանալիք ՀՀ Նախագահի ընտրությունների կազմակերպումն ու պատշաճ անցկացումն էր: Նշվեց, որ բոլոր համայնքներում նախապատրաստական աշխատանքներն ընթանում են ըստ սահմանված կանոնակարգի և ժամանակացույցի:

Ամփոփելով անցնող տարին, մարզպետը շնորհավորեց համայնքապետերին Նոր Տարվա եւ Սուրբ Ծննդի կապակցությամբ:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

1.Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Յու.Ազատյանին

--- Հավաքագրել մարզին տրամադրված աշնանացան ցորենի սերմացուի գումարները:

/ժամկետ մինչև հունվարի 30 /

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս.Հովսեփյան

--- Մարզի համայնքներում տեղեկատվական կենտրոնների կազմմավորման վերաբերյալ:

2.Ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
Ն. Գալստյան

--- Գնումները կազմակերպել բացառապես ՀՀ գնումների մասին օրենքների դրույթներին համապատասխան:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ